



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍ ԵՐԵՍՈՒՆՆԻՈՒԹՆԵՐՈՐԻ

18 ՓԵՏՐՈՒԱՐ 1872



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. Յ. ԳԻՐԳԻՅԱՆ

— 1872 —

ՏԻՆՆԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՄԱՆ ԿՈՄԻՏԵ


ՔՐԻՍՏՈՍԻԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՄԱՆ ԿՈՄԻՏԵ

ՏԻՆՆԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՄԱՆ ԿՈՄԻՏԵ

ՏԻՆՆԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՄԱՆ ԿՈՄԻՏԵ

ՏԻՆՆԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՄԱՆ ԿՈՄԻՏԵ

ՏԻՆՆԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՄԱՆ ԿՈՄԻՏԵ



ՏԻՆՆԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՄԱՆ ԿՈՄԻՏԵ

ՏԻՆՆԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՄԱՆ ԿՈՄԻՏԵ

— 1878 —

Հանրային կրթության մասին հարցազրույցի մասին և այլուհետև...

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՔԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԼԸ

18 ՓԵՏՐՎԱՐ 1872

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. Լ. Ֆ. (Բ. Ատենապետ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

1. Ընտրութիւն Ազգ. վարչութեան կրօն. ժողովոյ :
2. Կաթողիկոսական եւ Պատրիարքական յարաբերութիւնք :
3. Ատենական կանոնադրութիւն :
4. Տեղեկագիր դաւառական հարստահարութեանց :

Ատենապետ Ե. Ֆ. յայտարարելով թէ Լ. Ֆ. Նըստէն 'ի վեր' երբեմն տպագրութեանց յապաղման եւ երբեմն ատենանի բացման ժամանակ մեծագոյն մասի բացակայութեան պատճառներով ատենադրութիւնք ղիտողութեան եւ ընդունելութեան չեն ենթարկելու, եւ թէ հետեւապէս պէտք է որ Գիւանը նախ իւրայն պարտաւորութիւնք լրացնէ, հրաւիրեց ղերեստիտանս Լ. Ֆ. նստի ատենադրութեանն սկիզբը իրենց ղիտողութիւնքը յառաջ բերել :

ԻՓԷԿԵԱՆ Է. Է. Ֆ. — Որովհետեւ կանխաւ չէր ազդարարուած թէ ատենադրութիւնք այսօր ղիտողութեան պիտի դնուին, որպէս զի իւրաքանչիւր երեստիտան իւր ղիտողութիւնքն աւփոփելով հոս բերէր, կ'առաջարկեմ որ յանդիմանապէս ատենադրութեանց ընդունելութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ Է. Ֆ. — Ժողովը իր օրէնք ընդունած է խնդրոց կարգէն առաջ ատենադրութիւնքը ընդունելութեան ենթարկել, եւ Գիւանը սովորութիւն չունի ատենադրութեանց ընդունելութիւնը եւ թողուլ. 'ի բաց անել արժ տարջ կարգի պատճառներ, որք մի քանի նրա տերէ հետ արգելք դարձան իրեն. Հետեւապէս կը խնդրեմ որ Լ. Ֆ. նստի ատենադրութեան վրայ ղիտողութիւնք, եթէ կան, յայտնուին : Տ. ՂԵՒՆԴ ՎՐԻ. ՓԻՐՂԱԼԵՄԵԱՆ. — 498^ե

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՆԱԽԸՆԹԱՅ Լ. Ֆ. ԼԴ. ԼԴ. ԼԵ. ԵՒ ԼԷ. ՆՍԻՑ

տեղ տեղ մանաւանդ Մայրաքաղաքէս հե-
ռու և յարաբերութեան մասին գծուա-
րութիւն ունեցող գաւառաց կայսերական
պաշտօնեայք՝ վեհ Սուլթանին կամաց և
հրամանաց և երկրին օրինաց հակառակ
ընթացքի մէջ են, որոնց թոյլտուութեամբ
քր կամ անհոգութեամբ շատ անգամ կը
բծնական խտրութեանց և մոլեռանդու-
թեանց աղէտալի անցքեր կը պատահին,
արքունի շինուածաց համար մարդիկ ու-
կորչի կը բռնուին, գրամական պա-
հանջումներ կը ըլլան, ճանապարհաց շինու-
թեան պատրուակաւ ժողովուրդը կը կե-
ղեքուի, հոգաւոր ազգաց մանաւանդ մեր
ազգէն անջատեալ Հայոց և մեր մէջ բա-
ժանման և երկպառակութեան տարերքնե-
րը կ'աճին, կ'անայք և անչափահաս ման-
կունք բռնի մահմէտականութեան գարձը
նետու ջանքեր կը ըլլան: Գարձեալ սոյն պաշ-
տօնէից անհոգութեամբ արքունի տրոց
բաշխման և հաւաքման մէջ զեղծմունք կը
գործուին, ուրիշ ուրիշ տարբեր մեռնո-
ղի և գաղթողի կամ բոլորովն անյայտ ե-
ղողի բաժինն ալ մնացեալներէն կը պա-
հանջուի, որով վճարումն անկարելի եղած
ուրիշներ մնայած կը ծանրանան այլեւայլ
գաւառաց մէջ, Այսպէս նաեւ եւրոպէական
տրոց մասին անարգար բաշխում և
հաւաքում կը ըլլայ, որն որ բազմատմամբ
ոչ մահմէտականաց վրայ աւելի ծանրացած
է, քան թէ մահմէտականաց, վերջապէս
տրոց հաւաքման պատրուակաւ ազգատին
անհրաժեշտ կահարասիքն ու գործիքը
բռնի ծախելու և զանոնք բանտարկելու
խստութիւններ ՚ի գործ կը գրուին:

Իսկ Միւլթեղիմներու համար եղած
գանգատներն ընդհանուր են: Այս մասին
գանգատները միտերան կը հաստատեն
թէ՛ եղած զեղծումները այն Պէյերէն կամ
կառավարութեան ժողովոց այն անգամներ
րէն են, որոնք օրինաց հակառակ չ'գոր-
ծելու համար իրենք վարձակալութիւն (իւ-
թիզամ) չեն ընել, այլ իրենց տղայքը կամ
սպասուորները կամ այլ ծանօթները:

Օ՛հնքին արգելքը բաւական է հասկը-

ցնել թէ՛ երբ այսպիսի չարաչար գործա-
ծութեան ճանապարհ մը գտնուած է, ժո-
ղովուրդը ինչ ձեռքերու տակ կը մնայ,
աղքատը որչափ անիրաւութեան տակ կը
ճնշուի զինքը հարստահարողէն: Այս տե-
սակ Միւլթեղիմները գիտնան իսկ թէ պի-
տի գնասին, չեն վախնար, զի վնասնին
հանելու միջոցներն ունին, աղքատը կեղե-
քելով, և չափազանց գիներ դնելով անոնց
բերքին վրայ:

Այսչափ ցորեն կամ բամբակ կու տայ
այս արտը, այսչափ գրամ պիտի տաս կը-
սեն, (գրամ կառնեն և ոչ բերքին տեսա-
կէն, և այն ալ պղնձ գրամ չեն առնել),
եթէ բերքին տէրը գեղամակի տալ, միւլ-
թեղիմը ալ աւելի կը հակառակի և բերքը
երեսի վրայ կը թողու (զի մինչեւ տասա-
նորդը չառնուի, բերքը իր շտեմարանը չը
բարձուիր), որ կրնայ շատ վնասներու են-
թակայ ըլլալ, ապա աւելի ուղած տասա-
նորդին կրկնապատիկը կը պահանջէ ու
կառնէ:

Տան պիտոյից համար տան պարտիզի
մէջ ցանուած բերքին վրայ ալ տասանորդ-
ը պահանջուի:

Եթէ բերքին տեսակէն տասանորդ առ-
նուի, նոյն իսկ բերքին տիրոջը բառնալ
կու տան առնուած տասանորդը և խեղճե-
րը օրերով կ'սպասեն ուրիշ գուռը,
որ բերքը չափուի ու վերցուի:

Կը գանդատին նաեւ թէ Միւլթեղիմ-
ները հնձոց ժամանակ չեն գար, շատ ան-
գամ մինչեւ այն ատեն տասանորդը ծա-
խուած չըլլալուն համար կառավարութեան
կողմէ ալ մէկը չ'գար, և այնպէս բերքը
երեսի վրայ կը մնայ ու կը փտի, և հուսկ
ուրեմն կու գան և այն վնասեալ ու փտեալ
բերքերուն համար թղջի արժէքով գրամ
կը պահանջեն:

Այս պարագային մէջ գեղապետաց օգ-
նութեամբը աղքատն ամեն տեսակ տառա-
պանաց կենթարկուի, դատի կը քաշկըռ-
տուի, կը տրորուի, կը բանտարկուի: Միւլ-
թեղիմներու հետ գաղտնի ընկեր եղող պաշ-
տօնեայք անոնց շահուն միայն կը ծառա-

յեն, և խեղճ հողագործը ճարահատեալ
իր ունեցածը վրայ կու տայ, և տակաւին չը-
կրնար Միւլթեղիմին ձեռքէն ազատիլ:

Չմիայն մօտ և երբեմն ՚ի մէջ ձմրան,
Միւլթեղիմներուն ՚ի գիւղօրէս երկէն
խիտ վնասակար արգելքներ յառաջ կու-
գան, գիւղացին պարտաւոր է ձրիարար
կերակրել Միւլթեղիմն և անոր գործա-
կալները, որչափ ժամանակ որ հիւր մնան
իրեց գիւղը, անոնց հանեցնելու եղանա-
կաւ, երբեմն ալ կը ծեծուին և երբեմն ալ
կանանց պատիւը կ'արատաւօրի:

Վերջին ատեններս քանի մը գաւառ-
ներու մէջ հողագործաց եղանց լծերն ալ
գրուել և ՚ի գլուխ մէկ լծոց երկու կոտ,
այն է չորս լիտր ցորեն առնուել է տասա-
նորդ և կարի խստութեամբ, քանզի տ-
նոնք որ ցորեն չունէին, բռնադատուե-
ր են գրամով զնել քաղաքացիներէն և վը-
ճարել:

Եւրոպէական կամ Եւրոպէական ըսուած ար-
գիւնալ տուրք մ'ալ կայ, որ բերքին 1/16 է,
երբեմն ալ աւելի, զոր հողագործը եթէ
չ'տայ Շահնան շատ վնասներ կը հասցընէ
անոր:

Այս գանգատներն աւելի ծանր են այն
գաւառաց մէջ, յորս Պէյ կամ Սըլա կամ
Քիւրտ բռնաւորներ կան, և անոնք ալ կամ
իշխանութեան մէջ են, և կամ իշխանու-
թեան առջեւ ազդեցութիւն ունին:

Քարեխնամ կառավարութիւնը արդէն
տեղեակ ըլլալով գաւառաց խորեքուն մէջ
պատահած այսպիսի զեղծմանց, նոր և ազ-
գու միջոցներ ձեռք առած է բարեկար-
գութեան հաստատութեանը և ժողովուրդ-
եան բարօրութեանը համար: Եւ արդարեւ
ձեռք առնուած միջոցներուն մէջ ամենէն
ընտիրը կը համարուի այն գրութիւնը՝ որ
Ինքն ինք տեղական կառավարութեանց
դէմ, որն որ յատուկ յուրնալծիներու ձե-
ռօք կատարել կը փորձուի առաջին ան-
գամ: Այս գրութիւնը իր օգուտները պի-
տի մատակարարել կառավարութեան և երկ-
րին ժողովուրդեան: Միայն թէ այս քննչու-
թիւնը օգտակար ըլլալու համար հարկ է որ

ժողովուրդն անոր ըլլայ իր ցաւերն անկեղ-
ծութեամբ խօսելու, և այս անվախութիւնն
ալ կառավարութեան ձեռք առած և առ-
նելիք միջոցներէն կրնայ դոյանալ, երբ լան-
ցաւոր որ և է գաւառական պաշտօնեայն
անոր արտաքին յարաբերութեան, իսկապա-
մերժելով զայն ՚ի պաշտօնէ: Այս անգոր-
դու երկ կամքը վերջին անգամ վերձով տես-
նուելով, մեծ յոյս կու տայ կայսերական կա-
ռավարութեան գ. բոլոր հաւատարիմ ժո-
ղովուրդեան թէ հետ զհետէ մեծամեծ բա-
րիք վայելելու և իրենց ցաւերը մոռնալու
արժանի պիտի ըլլայ, շնորհիւ վեհ կայսեր
և անոր արժանընտիր պաշտօնէութեան:

Այս մասին Բարեխնամ կառավարու-
թեանը ունեցած հայրական բարի գիտա-
ւորութեանց ճշգիւ գործադրութեան հըս-
կելու համար մեծապէս կրնան նպատեւ
նաեւ մեր Ազգին գաւառական վարչու-
թիւնները և անոնց Առաջնորդները, որոնց
գաղտնաւորութեան թէ ուղղակի տեղական կա-
ռավարութեան և թէ Պատրիարքարանիս
Թագրիմներուն միջոցաւ բարեխնամ կառա-
վարութեանը ներկայացած են և կը ներ-
կայանան միշտ: Սակայն ասկէ յառաջ գոր-
ծածուած իսթիլամի եղանակը մեծապէս
աննպատ էր ժողովուրդին ցաւոց դարման
ըլլալու մասին, վասնզի՝ յայտնի կերեւէր թէ
ժողովուրդը որչափ վախ ունէր տեղական
կառավարութեանց վրայ գանգատելէ, կամ
թէ որ գանգատէր, իսթիլամի մէջ յետս
կողելու, կամ սխալ տեղեկութիւն հաղոր-
դելու կը պարտաւորէր, զի իսթիլամի բուն
իսկ այն կառավարութեանն կ'ըլլար, որմէ
էր ժողովուրդեան գանգատը: Այս անպա-
տեհ եղանակը՝ որ այժմ յուրնալծիներու
գրութեան հաստատութեամբ բարձուած
կը յուսացուի, ոչ միայն տեղական կառա-
վարութեանց վատթարանալուն կը ծառա-
յէր, այլ շատ անգամ արգելք իսկ կը ըլլար այն
տեղական կառավարութեանց՝ որ ժողովուր-
դըն աղէկ հոգալու և աղքատը պաշտպանե-
լու ջանք կու գէր ցուցնել: Այս արգելքն
յարուցանողներն եղած են միշտ իրաքան-
չիւր գաւառի համար տեղացի բնիկ մե-

ժամուկը, որոնց պարտութենէն ազատ կամ զերծ կաւալարութեան գլուխ մը կամ այլ պաշտօնեայ թերեւս բնաւ եղած չէ, կամ թէ որ եղած ալ է նէ, շուտ հասած է անոր անկումը տեղացի բնիկ մեծատանց միաբանութեամբը. վասն զի կառավարութեան պաշտօնէից համար անչէ կամ գէշ վկայութիւն տուողներն իրենք եղած են միշտ. Որչափ որ այս բնիկ մեծատանց ազգեցյութիւնը չափաւորուած էր համարութեամբ առաւելան կառավարութեանց թէշքիլայ թի եղանակաւ, որ արձեալ այդ ընտրութեան եղանակը հիմնապէս անոնց կը ժառայէ. թէ ֆրիք մէջիսին կը բազկանայ Միւթէտալը քէ, Հագիմէ քէնտիէ, Միւթիթիէ, Թահ-րիրթի միւթիթիէ և ոչ մահմէտական ժողովրդեան գլուխներէ, որոնք ուղածներն ընտրելեաց ցանկը կրնան անցընել. և այս ցանկն ալ է-է-է ըլլալով, կառավարութեան պաշտօնէից խորհրդականութիւնը սահմանափակուած էր անոնց քիչ քիչ և կը մնայ այնպէս. Օրինաց այս արամադրութենէն տեղացի բնիկ մեծատանց շատ օգուտ չի քաղելուն միջոցը բարեխնամ կառավարութեանը բարձր հոգածութեանց արժանի նիւթ մ'է. և այս առթիւ Պատրիարքարանս սա խընդիրը միայն կը համարձակի աւելցնել թէ ֆրիք մէջ լիսիին պատրաստած ընտրելեաց ցանկն աւելի ընդարձակութեան կարօտ է. կամ թէ ֆրիք մէջիսին կազմութիւնը -- է-է-է -- շուտ քիչ է. և ինչպէս Մուշտորդաց ներկայութիւնն հարկաւոր է, նոյնպէս առանց անոնց ներկայութեան կամ հասնութեան ընտրելեաց ցանկ չի պատրաստուի, և իւրաքանչիւր ազգի ընտրելիներն ալ կանխաւ Ազգային ներքին ժողովոց խորհրդակցութեամբը պատրաստուած ըլլան.

Փորձը կ'ապացուցանէ թէ ձեռք առնուած ազգու միջոցներէն ամենէն աւելի զօրաւորն արդարութեան ճշդիւ կիրառութիւնն է, և պիտի ըլլայ միշտ. երբ կառավարութիւնը կը քննէ կը դարձանէ և

ապագային ապահովութեան համար կը պատժէ, տարակոյտ չըլլայ թէ բազմացած նպատակին պիտի հասնի. Սուտի երբ դաւառաց մէջ առաջնորդները որեւիցէ զեղծման մը վրայ բողոք կամ գանդատ ունենան տեղական կառավարութեան, և այն ուշադրութեան առնուի. և կամ թէ Պատրիարքարանս գանդատ կամ բողոք ունենայ առ Բ. Գ. ուն, թէ կառավարութեանը և թէ Պատրիարքարանիս կողմէն լիազօր քննիչներով քննութիւն ըլլայ, կամ ՚ի հարկին քննութիւնը ՚ի Պոլիս փոխադրուի, մեծ և իրական արդիւնք ձեռք բերել հընար պիտի ըլլայ, այսպիսի ազդու միջոցներով. Մանաւանդ պէտք է որ Բ. Գրան հրամանագրերն վիւլյէթի պաշտօնական լրագրաց միջոցաւ հաղորդուին ՚ի տեղեկութիւն ժողովրդեան, որպէս զի շատ անգամ -- է-է-է -- մնալու և կամ թերի դորձագրուելու վիճակէ զերծ ըլլան. և հպատակ ազգաց գլուխները և նոյն իսկ այն յուրնաճիւնները, որոնց պաշտօն արձուած է Բ. Գրան հրամանագրերուն գործադրութեան վիճակը քննել ժողովրդական ազդիւրներէ, կարող ըլլան անոնց վրայ հըսկելու և անոնց գործադրութիւնը պահանջ ջերու. Այսպէս նաև հարկէ ճիշտութեանը ամեն ազգաց լեզուին թարգմանութեամբ վերածել. Ուստի և տղէտ մարդոց մէջ կրօնական խարութեան առիթներով ծագած դժտութեանց մէկ գլխաւոր առարկային նուազման ոչ սակաւ պիտի նպաստէ. և թէ օրէնքը կրօնափոխութեան դիմողներու համար օրոշ տրամադրութիւններ պարունակէ, մանաւանդ կնիկ մարդոց համար ան առեւն այս մասին եղած բազմադիմի գանդատները վերջ կը գտնեն. և կրօնափոխ իր ազատ համոզմանը տէր կըլլայ, որ արդէն բարեխնամ կառավարութեանը ընդունած ազատ սկզբունքներէն մէկն է. Այսպէս օրէնքի մը հարկաւորութիւնը կը նկատուի, կրօնափոխ արանց իրենց կնոջ և զուգակացը -- է-է-է -- մը վճարելու մասին.

Եթէ բարեխնամ կառավարութիւնը ազգու միջոցներով դաւառական կառա-

վարութեան պաշտօնեայները հսկողութեան ներքեւ առնու, ան առեւն -- է-է-է -- բարձր ՚ի գլուխ պիտի պանծայ, և անով շատ մը գանդատներու աղբիւրը պիտի չորանայ. արքունի տրոց նկատմամբ եղած զեղծմունք պիտի բարձուին. տրոց բաշխումն և հաւաքումը արդարութեան վրայ հիմնել կարելի պիտի ըլլայ. և մանաւանդ երկիրը պիտի ազատի Միւթէզիմներու տնողքերէն ձեռքէն. և հողագործութիւնը որ երկրին կեանքն է, և Միւթէզիմներու երեսէն այսօր հողեվարք վիճակի հասած, բարեխնամ կառավարութեանը շնորհիւ պիտի սկսի նոր կենդանութիւն զգենուլ, այս մայր արուեստը, որ Արեւելցոցոց միակ արուեստ մնացած է, և բնութիւնն ալ զայն զարգացնելու միջոցներով օժտած. Այս մասին մեծապէս պիտի նպաստէ անվճարեցի Պագայէներուն և հողագործներուն ուրիշ կարեւոր ապահովութիւններու շնորհումը. որ բարեխնամ կառավարութեանը ձեռնհասութեանը կը պատկանի.

Ուրիշ դժբաղդութիւն մ'ալ կայ որ ոչ նուազ ցուալի հետեւանքներ ունեցած է, և կունենայ միշտ, այն է ոչ մահմէտականաց վկայութեան չի բռնուիլը. Աւելորդ է ըսել թէ այս պատճառաւ սրչափ առեւանքութիւնք, յախշանկութիւնք, զողութիւնք, նա մանաւանդ սպանութիւնք անպատիժ մնացած են կամ անյայտ, նոյն իսկ կառավարութեան ջանից հակառակ. տարակոյտ չըլլայ որ եթէ բարեկարգութեան հրովարտակին տրամադրութեանց համաձայն, կաշտածական առեւտրական և ոճրագործական դատերը անպատճառ (հէր հալտէ) նիզամի ասեաններու մէջ քննուին, բարեկարգութեան հաստատութեանը, հարստահարութեանց և շատ տեսակ զրկանաց բարձման ծառայելէ զատ, հաւասարութիւն ըտեւած սկզբունքը պիտի իրականացնէ.

Գարձեալ ամենացուալի հարկի մը մէջ կը գտնուինք գանդատելու ֆիւրտերու և

այն լեռնայի ցեղերու դէմ որոնք վրանաբնակ ըլլալով ամեն սողաց մանաւանդ կառավարութեան գանձուն ալ մեծապէս վնասակար են. Ասանք զէնք կը կրեն, կառավարութեան ոչ տուրք կուտան ոչ ալ զինս որ և ասրասամբ են, մինչդեռ միւս ժողովրդներն անգէն են և կառավարութեան տուրք և զինուոր կամ Պէտէլ կուտան. աւելի տուրք մ'ալ այդ ազատամբներուն տալու պարտաւորութեամբ. Այս հարստահարութեանց ներքեւ առեւել կը գտնուին էրդուսի և Տիարագէ քիլի վիլայէթները, և անոնց մէջ Մուշ, վան, Բիլի, Ղուզուլան, Դէրձան, Բաղէշ, Չարասնձաք, Սղերտ և այլն.

Կայսերական բարեխնամ կառավարութիւնը արդէն հրատարակեալ խաթմի շիւմուցուններով ժողովրդեան կենաց, բնչից և պատուոց ապահովութեան պիտի քրճանչած է, որ ըստ այնմ երկիրը բարգաւաճի և զտրգանայ. սակայն ցարօք սրտի կը տեսնուի որ գաւառայ մատաւանք վերայ լեռնայի ցեղերու աւազակութեանց և յախշանկութեանց և սպանութեանցը ենթակայ եղած է. Յողովուրդը այսպիսի կեղեքմանց ներքեւ անհնար է որ կարող ըլլայ աշխատիլ, աշխատիլ այնպէս ինչպէս որ երկրին բարգաւաճումը կը պահանջէ.

Երկրի մը յառաջադիմութեանը և հարստութեանը միջոց ժողովրդեան աշխատութիւնն է, ինչպէս որ բարեխնամ կառավարութիւնք յուսնաճիւններու հրահանգին մէջ նշանակած էր. ամեն յառաջադիմութեան հիմն եղող աշխատութիւնն ալ այն առեւն կարելի է, երբ աշխատողը իր աշխատութեանց արգասիքը -- է-է-է -- վայելելու վստահ ըլլայ. մարդս բնականաբար իր վիճակը բարեկարգելու և իր հայրենեաց բարօրութիւնը փնտռելու անընդհատ միտում ունի, մարդուս այս բնական միտումը այն առեւն կեղծանի, երբ տեսնէ որ իր աշխատութեանն իրմէ աւելի ուրիշները օգուտ կը քաղեն. և վասն որոյ երկրին յառաջադիմութեանը և հարստու-

արկութեան դէմ եւ Վիւանն անոնց բարոյքելու ազատութեան իրաւունքը յարգելով յապանէ յանուանէ նշանակելէ բողոքողներն ատենագրութեան մէջ Այս անցքէն ետեւ երբ այսօր նոյն ատենագրութիւնն ընդունելութեան կը դրուի, բողոքող երեսփոխաններէն ոմանք չիշեալ որոշումն անոց եւ անոր արձանագրութիւնը քննարկելու համարելու վորձ կը վորձեն, բայց չեն յաջողիր: Վասն զի ատենագրութիւնն ընդունած կը հրատարակի ժողովոյն ամենամեծագոյն մասին կամքովը եւ հիմայ ալ երբ ըստ նոյն որոշումն կարգը կ'ընեն ժողովոյ ընտրութեան խնդրոյն կուգայ, կերեն եւ այն որոշումն գոյութեան դէմ մեծաւ ճգամբ կը մատարին ի նորոյ: Աւասիկ անխորհուրդ եւ անպատշաճ ջանք մը որ պէտք չէր երեսան գար երեսփոխանական ժողովոյ մէջ: Եթէ ըստուցիւ այնպիսի որոշում տուած չէր ժողովըն իւր նախընթաց նստին մէջ, ըսել էր թէ Վիւանն իւրովի որոշում մը կը վերադրէր ժողովոյն եւ անոր պաշտօնական արձանագրութեանց մէջ անցընելու կը ժայրէր: Միթէ օրինաւորութեան նախանձանդիւր երեսփոխանի մը պարտքը պարզ գիտողութեամբ մը միայն պատժել էր Վիւանին այսպիսի մէկ աննիւրի յանցանքը, եթէ ոչ խնդրոյն ծանրութիւնը կը ընդունելով յանցապարան ամբաստանութեան տակ ձգել, գործը մանրախոյզ քննութեան ենթարկել եւ դատապարտելոյն արժանի պատժոյն անորէնութիւնը պահանջել:

Յաւելով կրնամ որ, երբ այս նկատողութիւնները կրնամ, ինձ կը թուի թէ այդ երեսփոխանք պարզապէս հասարակաց տեղի մը կը նկատեն ժողովարանս, ուր եկած ըլլան իւրաքանչիւրն իւր անձնական կամաց ու հաճոյից ծառայելու:

Այն ինչ գաւառական հարստահարութեանց օրտամաչ խնդրոյն մասին առ Բ. Գոսն մատուցանելի անգնկապոյն որոշուած տուինք պահ մ'առաջ, այն ինչ հանդիտական ժողովուրդը գոհունակութեան զգացում սկսաւ տածել այն մասին, այնպիսի դժոյատե՛ խնդիր մը կը յարուցուի, որ ժողովուրդն իր ակնկալութեանց մէջ խարտիլ կզգայ եւ կը արամաղրի մեղադրանաց ձայն բարձրացնել մեր դէմ, որոյ համար իրաւունք պիտի ունենայ, եթէ մեր այսպիսի ընդունայն վիճարանութեանց կարեւորութիւն տամք:

Աւր որքեմն Ատենապետ էֆ. վիճարանու-

նութեան վերջ տալով կանցի ի կրօն ժողովոյ խնդրոյն:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՅՂ. ՎԱՐՁ. ԿՐԾՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

ԱՂԱՔԷԳԵԱՆ Մ. ԷՑ. — Եկեղեցական ժողովոյ կառավարութեան վրայ, զի չեմ ուզեր կրօն ժողով կոչել, արդէն պէտք եղածն ասած եմ եւ խոստումն ընդունած որ Սահմանադրութեան վերաքննութեան միջոցին վերստին խօսիմ. ուստի հիմայ լաւ կը լինի որ Սահմանադրութեան համաձայն կազմուի այդ ժողովը:

Տ. ՂԵՒՈՆԴ ՎՐԻ. ՓԻՐՂԱՆԻՄԵԱՆ. — Կրօնական ժողովոյ ընտրութեան համար երեսփոխանները քուէարկութեան հրաւիրելէ յառաջ, անշուշտ ըստ Սահմանադրութեան Համագումար ժողովոյ ձեռօք ընտրելաց յանկ մը պիտի պատրաստուի եւ ապա ընտրութեան ձեռնարկուի:

ԽՈՅԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՑ. — Կրօն. ժողովոյ ընտրութիւնը մեր խնդրեցինք եւ անոր ատեղողականութիւնը պնդեցինք, երբ Մարկոս էֆ. անոր կազմութեան եղանակին վրայ միայն խօսեցաւ: Ուստի պէտք է արդ ըստ Սահմանադրութեան Ակեղեցականներէ բաղկացեալ կրօն ժողով մը կազմելու համար նախագահ Սրբազանի առաջարկութեան համեմատ ընտրութեան հրաւիրել երեսփոխանները:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՑ. — (Խօսելով Արեւաշէն էֆ. ի մասին) ժողովը բացուած ժամանակ երեք խնդիր մէջ բերիք եւ անոնց ատկադրականութեան վրայ խօսք տուիք, մէկը երեսփոխանաց ոմանց Վիւանին ներկայացուցած զբաւոր առաջարկութիւնն էր, երկրորդը գաւառացւոց կողմէ մատուցուած հանրագիրն, իսկ երրորդը կրօն. ժողովոյ խնդիրը...

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — (Ընդհատելով) Խնդրէն կը շեղիք Այլատեան էֆ. խնդիրը կրօն. ժողովոյ ընտրութեան վրայ է, եւ ոչ խնդրոց ստիպողականութեան:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՑ. — Բայց պէտք էր նախ կրօն. ժողովոյ ընտրութեան եւ երեսփոխանաց առաջարկութեան ստիպողականութիւնը քուէի դնել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — (Ընդհատելով) Խնդիրը կրօն. ժողովոյ ընտրութեան վրայ է, ըստ որոշման ժողովոյ:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՑ. — Եթէ նախորդ նշատին մէջ այդպիսի որոշում կար տրուած, Վիւանին պարտքն էր զայն նախապէս յայտնել...

ԵՐՐՈՐԴ ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆՔ

Ատենապետ էֆ. կրնդ հատէ Այլատեան էֆ. խօսքը, զանի ի կարգ հրաւիրելով, եւ խօսքը Տ. Ամբրոսիոս Վարդապետին կուտայ:

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԻ. — Քիչ մ'առաջ գիտողութիւն մ'ունէի յայտնելու, սակայն զիս մէկէն ի մէկ սաստեցիք, զող ելայ, շփոթեցայ, վրաս սոսկում տիրեց եւ ըսելիքս կորսնցուցի...

Զայն մը. — Յարի էֆ. Խնդրէն է՛ւ շեղել է՛ւ ինչ է՛ւ:

Տ. ԽՈՐԷՆ ԵՊՍ. — Յաւալի եւս է որ կրօնական սրբազան արարողութիւն մը ծաղու նիւթ կը լինի այս ժողովոյն մէջ. որոյ դէմ եպիսկոպոս մը չկրնար առանց բողոքոյ հանդուրժել եւ անտեսելով անտարբեր կենալ:

Բաղմաթիւ երեսփոխանաց խնդրանաց վրայ Ատենապետ էֆ. քուէի կը դնէ նախագահ Սրբազանի առաջարկութիւնն եւ բացարձակ առաւելութեամբ կորոշուի, ընտրելաց ցանկ պատրաստել կրօնական Համագումար ժողովով, պատրաստեալ ցանկն երեսփոխանաց հաղորդել եւ զանոնք քուէարկութեան հրաւիրելով մինչեւ յառաջիկայ նիստ կրօն. ժողովոյ ընտրութիւնը կատարել, ըստ արամադրութեանց Սահմանադրութեան:

Այս որոշման գործադրութեան հոգը Ս. Նախագահ Հօր կը յանձնէ ժողովը:

Ատենապետ էֆ. խօսք կառնու երրորդ բացակայութեանց ցանկը ժողովոյ ներկայացնելու համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Ազգ. երեսփոխաններէն երեք անընդմիջական բացակայութիւն ունեցած են:

Տ. ԵՂԻՂԷ Քահանայ Մայր Եկեղեցւոյ Ոսկան Յակոբ էֆ.
Զրաքեան Գասպար

Թէպէտ Ոսկան Յակոբ էֆ. ի համար իմացած եմ թէ հրաժարական ուղղած է առ Նախագահ Սրբազանն, բայց այնպիսի գրութիւն մը հասած չէ Վիւանին:


Այսու ամենայնիւ ժողովն յիշեալ երեք երեսփոխաններն ալ ինքնին հրաժարեալ կը հըրատարակէ, ըստ օրինի:

Ատենապետ էֆ. կը ծանուցանէ թէ յառաջիկայ նստին խնդրոց կարգը պիտի լինի.

1. Ընտրութիւն կրօն ժողովոյ
2. Ատենական կանոնադրութիւն
3. Կաթուղիկոսական եւ Պատրիարքական յարաբերութիւնը:

Ատենը կը գոցուի ժամ 10 1/2 ին:

ԱՏԵՆԱՊԵՏ Ս. ԱՂԱՔԷԳԵԱՆ **ԱՏԵՆԱՊԵՏ Յ. Լ. ՄԷՐԵՆԷՄ-ԳՈՒԼԻ**



Handwritten text in a cursive script, likely a list or index, covering the upper half of the left page.

Handwritten text at the bottom of the left page, possibly a signature or date.



Handwritten text in a cursive script, continuing the list or index from the left page, covering the upper half of the right page.

Handwritten text at the bottom of the right page, possibly a signature or date.

Handwritten text in the upper right quadrant of the page.

Handwritten text in the center of the page, possibly a title or heading.

Handwritten text in the lower right quadrant of the page, possibly a signature or date.

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի , և կը գտնուի
Եկեղեցեաց բանկաները :